ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՆԱԿԱՆ ԿԱԼՎԱԾԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (XVI—XVII ԴԴ.)

ՀԱՄԼԵՏ ԹՈՐՈՍՅԱՆ

Արևելյան Հայաստանի Սեֆյան տիրապետության ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության մեջ առանձնակի կարևորություն ունի եկեղեցական հողատիրության ու եկեղեցական կալվածատիրական տնտեսության ուսումնասիրությունը[1]։ XVI—XVII դդ. Արևելյան Հայաստանում եկեղեցին խոշոր հողատեր էր։ Նրա հողատարածություններն իրենց ծավալով կարող էին չափվել խոշոր ավատատերերի տիրույթների հետ։ Ավատատիրական հարաբերությունների քայքայմանը զուգընթաց ավելի էր ամրապնդվում եկեղեցու տնտեսական ու սոցիալական ազդեցությունը։ Մեզ հասած սկզբնաղբյուրներում պահպանվել են ուշագրավ վկայություններ՝ եկեղեցական և հոգևոր ավատատիրական հողային սեփականության ու կալվածատիրական տնտեսության մասին։ «Ամենայն վանօրայք ազգիս հայոց,— գրում է Առաքել Դավրիժեցին, նկատի ունենալով քննվող ժամանակաշրջանը,— իւրաքանչիւր սեպհականութիւն ունէր իւր զինչս առանձին, այգի և բուրաստան, գեղեակ և տուն, և մարան, և համբարանոցս, և զմուտս ստացուածոց նաև զմուտս հասարակաց վանիցն մասունս արարեալ՝ յինքեանս բաժանէին»[2]։

Արևելյան Հայաստանում եկեղեցական հողատիրության աճն ու զարգացումն առաջին հերթին պայմանավորված էին հայ աշխարհիկ ավատատերերի նվիրատվություններով։ Վերջիններս քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով, իրենց հողային տիրույթները հափշտակումից փրկելու նպատակով, դրանք նվիրում էին հիմնականում սեփական տիրույթի սահմաններում գտնվող վանքերին, նկատի ունենալով, որ եկեղեցական հողերը համարվելով վակֆ՝ անձեռնմխելի էին ու պետականորեն ապահովված։ Շատ հաճախ էլ ավատատիրական տան որևէ ներկայացուցիչ ընդունում էր հոգևոր կարգ և իր ձեռքում կենտրոնացնում նույն շրջանի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունը[3]։ Ստանձնելով հոգևոր պաշտոններ, հայ ավատատերերը կա-

---

1 *Էջմիածնի կաթողիկոսության հողատիրության և կալվածատիրական տնտեսության պատմության հարցերի ուսումնասիրումը ներկա հոդվածում չենք ընդգրկել, քանի որ այն արժանի է առանձին քննության։*

2 «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, սակս դիպուածոց Հայաստանեայց և գաւառին Արարատայ և մասին Դողթան գաւառի սկսեալ ի ՌՃՄԱ թուականէն հայոց մինչ ի ՌՃԺԱ թ.», Վաղարշապատ, 1896, էջ 288—289, հմմտ. «Ժամանակագրութիւն Դրիդոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», Երուսաղեմ, 1915, էջ 296։

3 «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ», կազմեց՝ Հ. Դ. Փափազյան, պր. I (ԺԵ—ԺԶ դդ.), Երևան, 1956. էջ 26 (այսուհետև՝ ՄՊՀ), А. Л. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII веках, Ереван, 1972, с. 116—118.

ղող էին աղատորեն հողեր գնել ու նվիրել վանքերին։ Այսպես վարվեց, օրինակ, Արղությյան ավատատիրական տան ներկայացուցիչ Բարսեղ արքեպիսկոպոսը, որը 1690-ական թվականներին Սանահնի վանքին նվիրեց իր «Սամծերու երկու էգին իւր հնձանովն, ղՏալվերու գեղն էգին իւր հնձանովն, գԽոշորնաձորի ր օդին ծ աւրավար հողն. Բրդաձորի իգին իւր հնձանովն. Քարատակի իգին հնձանովն...»[4] և այլն։ Նվիրատվություններն ունեին նաև քաղաքական դրդապատճառներ։ Հայ ավատատերերը գտնում էին, որ եկեղեցու իրավունքների ամրապնդումը կնպաստի հետագայում իրենց իշխանության վերականգնմանը։

Հայ ավատատերերի կողմից եկեղեցուն հողեր նվիրելու բազմաթիվ դեպքեր տեղի էին ունենում նաև Արևմտյան Հայաստանում[5]։

Քննվող ժամանակաշրջանում կալվածատիրական խոշոր տնտեսություն ուներ Կարբիի գավառում գտնվող Հովհանավանքը։ Նրա հողային տիրույթների ընդարձակումն առաջին հերթին պայմանավորված էր նվիրատվություններով։ Վանքի արձանագրություններից մեկում կարդում ենք. «Յամի ՌԼԴ (1584) թուին, ես Դօլվաթ բէկ, թոռն Մալխուին, գնեցի հալալ արդեանց իմոց ոսկով հող, տուի ի դուռն սուրբ Կարապետին յիշատակ»[6]։ Նմանատիպ նվիրատվության մասին է պատմում նաև հետևյալ վավերագիրը. «Թուին ՌՁԸ (1639), ես երևանցի Ավագս և ամուսին իմ Դաստագուլ, միաբանեցաք և գնեցաք Ա ստակ[7] մուլք ի Փարպի, և տուաք ի դուռն սուրբ Կարապետիս»[8]։ Հովհանավանքի կալվածքների ընդարձակման գործում մեծ աշխատանք է կատարել նրա վանահայրերից Զաքարիան։ 1637 թ. Փիլիպոս կաթողիկոսի կողմից նշանակվելով վանքի առաջնորդ, նա իսկույն ձեռնամուխ է լինում նոր հողերի ձեռքբերմանը։ «Եվ ժողովեաց զհողս, և զայգիս, զՁ ստակ մուլք Յօհանավանաց, Զ ստակ մուլք Որդկանայ[9], Ա ստակ և կէս Սերկևիլոյ[10], Ա ստակ Փարպի»[11],— գրում է Զաքարիա Սարկավագը։ Ուրեմն, վանքն ունեցել է չորս մուլքատու գյուղեր, որոնցից առաջին երկուսին տիրել է ամբողջությամբ, իսկ վերջին երկուսի՝ համապատասխանաբար 1,5 և 1 ստակ մուլքերին։ Թվարկված մուլքատու գյուղերից բացի, վանքը Կարբի, Օհանավան, Ուշի և Փարպի գյուղերում ձեռք էր բերել մոտ 41 օրավար[12] մշակելի հողեր,

---

4 Ս. Ջալալյան, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփղիս, 1842, էջ 31։

5 Մ. Զուլալյան, Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ., Երևան, 1980, էջ 218—219։

6 Կ. Կոստանյան, Վիմական տարեգիր, Պետերբուրգ, 1913, էջ 180 (այսուհետև՝ «Վիմական տարեգիր»)։

7 Սեփականությունն օտարման ենթարկվելու դեպքում բաժանվում էր վեց հավասար մասերի, որը պարզական աղբյուրներում կոչվում էր դանդ, իսկ հայկականում դանգի փոխարեն հաճախ գործածվում էր ստակ բառը։ Մեկ ամբողջական կալվածքը վեց դանդ (ստակ) էր։

8 Հ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածին և հինգ գավառացն Արարատայ, մասն Բ, էջմիածին, 1842, էջ 105 (այսուհետև՝ Հ. Շահխաթունեանց)։

9 Որդկան գյուղը գտնվել է Օհանավանից (Աշտարակի շրջան) հյուսիս՝ Ապարան տանող ճանապարհի ձախ կողմում։ Այժմ անմարդաբնակ է։

10 Սերկևիլ գյուղը գտնվել է Օհանավանից հյուսիս-արևելք։ Այժմ անմարդաբնակ է։

11 «Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն», հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 34 (այսուհետև՝ Զաքարիա Սարկավագ)։

12 Օրավար հողը չափի միավոր է։ Արևելյան Հայաստանի շրջաններում այն տարբեր չափերով է արտահայտվել։ Կարբիի գավառում այն կազմել է մոտ 0,25 հա։

որտեղ մշակվում էին բանջարանոցային, հացահատիկային ու տեխնիկական կուլտուրաներ։ Վանքն ունեցել է չորս ջրաղաց, մեկ բրնձահան (դինգ), երկու ձիթաղաց և այլն[13]։

Հովհանավանքի կալվածատիրական տնտեսությունը շրջապատված էր այգիներով ու մրգաբեր ծառերով։ Զաքարիա Սարկավագի վկայությամբ, XVII դ. վանքին էին պատկանում տեր Մխիթարի այգին, Տանձուտ կոչվող այգին, տեր Հուսիկի պարտեզը (Կարբիում), դիլանճոց այգին, խուտիկենց այգին, Ջաֆարի այգին, Անապատի այգին ու Թեհենենց պարտեզը (Օհանավանում), Ընկուզենու պարտեզը (Ուշիում), Թարաղուլու պարտեզը ու «Մեծ» այգին (Փարպիում)[14]։ Հովհանավանքն ուներ նաև խոշոր ու մանր եղջերավոր անասուններ հոտեր։ Նշանակվելով վանահայր, Զաքարիան հողերի ձեռքբերման հետ միաժամանակ «ժողովեաց բազում անասունս, զձիս, զջորիս, և զերամակս մատակ ձիոց, և զեզինս, և զգոմէշս, և զխաշինս»[15]։ Վանքի համար լրացուցիչ եկամտի աղբյուր էին նաև Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններից պարբերաբար ստացվող հասույթները։ Զաքարիա Սարկավագը հայտնում է, որ վանքը նույնիսկ հեռավոր Շիրակից գանձել է «զպտղին և զսրբադրամն, զիւղն և զպանիր, և զամենայն հասն վանիցն»[16]։ Հովհանավանքն ունեցել է նաև մշակներ, որոնք կատարել են զանազան տիպի աշխատանքներ։ Նույն Զաքարիա Սարկավագի վկայությամբ ապարանցի Գալուստը մասնակցել է Շիրակից գանձվող վանքի հասույթների տեղափոխմանը, քանի որ նա «մշակ էր վանացն»[17]։ Վանքը փորձել է ձեռք բերել նաև հարկային իմունիտետ ու այդ նպատակով դիմել է Նոր Ջուղայի մեծամեծերին, որպեսզի նրանք, ազդելով շահի վրա, «հանին նօմոս արքունական, թէ հող և թէ ամենայն ինչ, զոր ինչ վարեմք և ցանեմք, առանց հնդորդի և տասնորդի զամենայն ժողովեմք յշտեմարանս»[18]։

Արևելյան Հայաստանի վանքերի մեջ ընդարձակ հողային կալվածքներով աչքի էր ընկնում Կարբիի գավառում գտնվող Սաղմոսավանքը։ Նրան կատարված հողային նվիրատվության շատ փաստերի հանդիպում ենք դեռևս XIII—XIV դդ.[19]։ Սակայն Սաղմոսավանքի կալվածատիրական տնտեսությունը մեծ զարգացում ապրեց հատկապես XVI—XVII դդ.։ Արդեն XVII դ. վանքը սեփականատիրական իրավունքով տիրել է Սաղմոսավանի վեց, Քարվանսարա գյուղի՝ երեք դանգ մուլքերին։ Սիմեոն Երևանցին հայտնում է, որ Սաղմոսավանի 1,5 դանգը վանքի վանահայր Մանվել վարդապետը 1632 թ. գնել է ոմն Մուրադից ու Մարիամից, իսկ մնացած 4,5 դանգը «ի բնէ վախմ է»[20]

---

13 Զ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա գ, հ. Գ, Վաղարշապատ, 1870, էջ 28։

14 Նույն տեղում, էջ 27—28։

15 Նույն տեղում, էջ 34։

16 Նույն տեղում, էջ 8։

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում, էջ 34։

19 Ղ. Ա լ ի շ ա ն, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 162։

20 Վախմ (վակֆ) էին կոչվում հոգևոր հաստատություններին նվիրված հողերն ու այլ ստացվածքները։ Վախմի դեպքում դրանք ձեռք էին բերում հարկային իմունիտետ ու ենթակա չէին օտարման։

հղել վանքին[21]։ Սակայն կալվածագրերից մեկում ասվում է, որ Վալի խալիֆե Ալփավութը 1581 թ. Ալի խալիֆե Ալփավութին յոթ թումանով վաճառել է Սաղմոսավան գյուղի ամբողջ վեց դանգ մուլքը[22]։ Շահ Աբաս I-ի 1604 թ. մի հրովարտակից պարզվում է, որ գյուղի երեք դանգը եղել է ոմն Քեշավոնի դուստր Վախախի օրինական ժառանգությունը[23]։ Շատ հավանական է, որ հիշյալ Քեշավոնը Ալի խալիֆե Ալփավութից գնել էր գյուղի երեք դանգն ու նվիրել իր աղջկան։ Հ. Փափազյանը գտնում է, որ մնացած երեք դանգն էլ պատկանել են նույն ընտանիքի այլ անդամների, որոնց սերունդներից են նաև վերը հիշված Մուրադն ու Մարիամը[24]։ Հավանաբար, մինչև Մանվել վարդապետը, գնվել է գյուղի 4,5 դանգը, իսկ մնացած 1,5 դանգի գնումից հետո վանքն ամբողջովին տիրում է գյուղի մուլքին։

Քարվանսարա գյուղի սեփականության իրավունքը վանքը ձեռք է բերել 1661 թ.։ Վավերագրերից մեկում այդ մասին կարդում ենք. «...ես Ոսկան վարդապետս յորժամ էի վանս Սաղմոսաց զՔարվանսարայ ի երեք ստակ մուլքն կերի, որքան էր անտ քանզի ստակ և կէս մուլքն Ալի բէկին և տէր Շմաւոնին հայրենիք է, որք ետուն Սաղմոսավանուցս վախմ, ստակ և կէսն այլ ես ի Թումանիցն հոգեբաժին առի, որով եղև երեք ստակ մուլքն»[25]։ Սիմեոն Երևանցու վկայությամբ «Համամլու, Այվազալի և Քուրտալի կոչեցեալ գեղօրէից մուլքն ևս են լեալ սոյնոյ վանքիս», սակայն հետագայում մի մահմեդական խաբեությամբ տիրում է այս գյուղերի սեփականության իրավունքին[26]։

Քննվող ժամանակաշրջանում Սաղմոսավանքը զանազան ճանապարհներով իր ձեռքում էր կենտրոնացրել վարելահողերի, այգիների ու խոտհարքների զգալի տարածություններ։ Ստացվող հումքը վերամշակվում էր վանքի տնտեսությունում, որն ուներ անհրաժեշտ արտադրական-տնտեսական կառույցներ[27]։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում սեփական կալվածքներ, արոտավայրեր, այգիներ, խոշոր ու մանր եղջերավոր անասունների հոտեր ուներ նաև Բջնիի ս. Աստվածածին վանքը։ Վանքի կալվածատիրական տնտեսության ընդարձակման գործում մեծ է եղել վանահայր Փիլիպոսի վաստակը։ 1631 թ. նշանակվելով վանքի առաջնորդ, նա առաջին հերթին ձեռնամուխ է լինում վանքի վերաշինման աշխատանքներին։ Այս գործում նրան նյութապես օգնում են Նոր Ջուղայի հայ առևտրականները[28]։ Այնուհետև, ինչպես վկայում է Զաքարիա Սարկավագը, Փիլիպոսը «շինեաց և ձիթաղացս, և ջրա-

---

21 Սիմեոն Երևանցի, Ջամբռ. Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն, Վաղարշապատ, 1873, էջ 289 (այսուհետև՝ «Ջամբռ»)։

22 «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Կալվածագրեր», պր. I, (ԺԴ—ԺՋ դդ.), կազմեց՝ Հ. Դ. Փափազյան, Երևան, 1968, էջ 130 (այսուհետև՝ ՄՊԿ)։

23 ՄՊՀ, պր. II (1601—1650 թթ.), կազմեց՝ Հ. Դ. Փափազյան, Երևան, 1959, էջ 81—82։

24 ՄՊԿ, պր. I, էջ 179։

25 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. № 242, վավ. № 4։

26 «Ջամբռ», էջ 289։

27 Նույն տեղում, էջ 290—291։

28 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 275։

դացս, զգոմս անասնոց, և զախոռս ձիուց, և զփարախս խաշանց»[29]։ Այս վանքի վանահայրերից Մեսրոպ վարդապետը 1701 թ. 800 դինարով ոմն Մկրտչից գնում է Կեղռուն գյուղի մեկ դանդ մուլքը[30]։ 1690—1720 թթ. վանքի վանահայրեր հիշյալ Մեսրոպը, Դավիթն ու Հովհաննեսը Կեղռուն, Քանաքեռ, Օշական, Բջնի և Նուռնուս գյուղերից ձեռք են բերում ընդհանուր հաշվով 12 այգի, 14 սոմար մշակելի հողակտոր, 5 կտոր վարելահող ու խոտհարքներ[31]։ Վանքի թեմի մեջ էին մտնում Կոտայքի ու Մաղկոտն գավառների շուրջ 49 գյուղեր, որոնցից ստացվում էին նրա հասույթները։

Իր հողային ընդարձակ կալվածքներով ու անշարժ գույքով Արևելյան Հայաստանի եկեղեցիների մեջ առանձնահատուկ տեղ էր գրավում Սանահնի վանքը։ Հայաստանի պատմության քննվող ժամանակաշրջանում այն բազմիցս կողոպտվել ու ավերվել է։ Սարգիս եպիսկոպոսը հայտնում է, որ նրա ստանձնել է վանքի առաջնորդությունը, Սանահնի տնտեսական դրությունը եղել է վատթար վիճակում, որ խլել են «ի վանիցս մուլքս և հայրենիքս»[32]։ Հետագա տարիներին Սարգիսը և նրան հաջորդած Բարսեղ արքեպիսկոպոսը կարողանում են աստիճանաբար կորցրածը ետ վերադարձնել, ինչպես Սարգիսն է ասում, «...առաջի մեծաց և իշխանաց կաշառաւք ոմանց գնելովս» ու այլ ճանապարհներով[33]։ Արդեն XVII դ. վերջին վանքը տիրել է 7 գյուղերի մուլքին, ունեցել է 11 այգի, 62 օրավար հող և 6 խոշոր հողամաս[34]։ Ձեռքբերված հողային տարածությունները վանահայրերը նախ գրանցում էին իրենց անունով և ապա նոր նվիրում վանքին։ «...Բ մեծ հող իմ հայտարարի և վախմ արարինք»[35],— գրում է Սարգիս եպիսկոպոսը։

Վանքի իրավունքները ճանաչում ու հաստատում են նաև Վրաստանի կառավարիչները։ Վրաց Ռոստոմ խանը 1652 թ. Սանահնի վանքին տված հրովարտակում հայտնում է, որ ինքը ոչ միայն հաստատում է վանքի թեմակալության իրավունքները «մինչև ի քաղաքն Տփղիս... ի կողմն Երեւանու Մաղկուցաձորն մինչև ի սահմանս Աղիստեփու Շիրակայ թեմն. Բամփակու ձորն և Լոռու թեմն», այլև «բաղում գիւղօրայց և տեղաց» վրա վանքի ունեցած սեփականատիրական իրավունքները[36]։

Վանքին մեծ շահույթ են բերել նաև զանազան արտադրական-տնտեսական կառույցները։ Այն ունեցել է 4 ջրաղաց, 2 ձիթհան, հնձաններ, մառաններ, տներ, կուղպակ-խանութներ և այլն[37]։

Սանահնի վանական տնտեսությունում օգտագործվել է նաև ճորտ գյուղացու աշխատանքը։ Զավթելով համայնական հողերը, հոգևոր ավատատերերն աշխատում էին իրենց ենթարկել նաև համայնքի անդամ գյուղացիներ-

---

29 Զաքարիա Սարկավագ, հ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 76։

30 «Ջամբռ», էջ 285։

31 Նույն տեղում, էջ 285—287։

32 Մատենադարան, ձեռ. № 3031, էջ 330։

33 Նույն տեղում, էջ 330։

34 Ս. Պողոսյան, Եկեղեցական հողատիրությունը Երևանի խանությունում 17—18-րդ դդ. և էջմիածինը որպես խոշոր կալվածատեր (Երևանի պետհամալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 13, Երևան, 1940, էջ 126)։

35 Մատենադարան, ձեռ. № 3031, էջ 334։

36 Ս. Ջալալյան, Նշվ. աշխ., մասն Ա, էջ 46—48։

37 Մատենադարան, ձեռ. № 3031, էջ 376, 378, 384։

ին. Սանահնի վանքի պատմությունը նկարագրող Մատենադարանի «Քյոթուկ Սանահնի վանուց» անունը կրող ձեռագրում կան արժեքավոր շատ վկայություններ ճորտերի, նրանց տնտեսության, հողատերերի հետ ունեցած փոխհարաբերությունների մասին և այլն։ Այդ ձեռագրի էջերից մեկում կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին հայտնում է, որ երբ 1664 թ. «...վասն ուխտանելոյ վանորէից եկաք Սանահնոյ վանքն, Արղութեցոց ջամիաթն ամենեքեան իւրեանց բերանով խղրար արին ինձ մաւտ թէ մեր յօժար կամօք Ռռնակա շինականքն իւրեանց հողովն, ջրովն ծախեցինք Սարգիս եպիսկոպոսին...»[38]։ Նման բնույթի մեկ այլ վավերագրում ասվում է. «Կամաւն ամենազօրին ես պարոն Զալ բէկի որդի Դասպարըս. իմ որդի Դօգիս. մեր ըռզովս մեր Ռռնակա ծիլ[39] շինական. շիխու Մխիթարն. Ակոբն. Խէչիկն ծախեցինք վերայ Սարգիս պարոն տէրին իրանց տանովն, իրանց հողովն, իրանց ջրովն... պարոն տէրն գնեց վախմ արաւ Սանահնու սուրբ Աստուածածնին»[40]։

Տիրոջ իրավունքները տարածվում էին ոչ միայն առանձին մարդկանց, այլև նրանց ընտանիքի մյուս անդամների վրա ևս։ «Գնեցի Սուլխանն իր Բ որդովն, մէկ դուստրովն»[41],— հայտնում է Սարգիս եպիսկոպոսը։ Այսպիսով, որքան ավելի էր ամրապնդվում ավատատիրական սեփականությունը հողի նկատմամբ, այնքան ավելի էին աճում հողատեր ավատատերերի իրավունքներն իրենցից կախված մարդկանց նկատմամբ։

XVI—XVII դդ. ընդարձակ կալվածքներ ուներ Գառնիի գավառում գտնվող ս. Ամենափրկիչ վանքը։ Նրա տիրույթները նկարագրող 1526 թ. մի կալվածագրից երևում է, որ վանքը Զաքարիա և Համազասպ վարդապետներից ստացել է Կղզի վանք, Մանկուս, Ավանիկ գյուղերի, ինչպես նաև Քեղվարդ ու Սուրբ Սարգիս ագարակների 3 դանգ մուլքերը[42]։ Հետագայում, ըստ Սիմեոն Երևանցու հայտնած տեղեկությունների, վանքն իր սեփականատիրական իրավունքները տարածել է Հայոց-թառ, Կոտուց վանք («որ Թարաքեամի գեօղ ևս կոչի»), Թառնիս, Ագարակ, Կոխդ և Դաղվերթ գյուղերի վրա[43]։ Վերը թվարկված գյուղերից Սիմեոն Երևանցին չի հիշատակում միայն Քեղվարդը։ Ստուգաբանելով Դաղվերթ անունը, Պ. Հարությունյանը գրում է, թե տեքստում հավանաբար սխալի հետևանքով Քաղբերթ է և պետք է լինի Դաղբերթ։ Նա միաժամանակ նշում է, որ ո՛չ Քաղբերթը և ո՛չ էլ Դաղբերդը Ղ. Ալիշանի «Այրարատ» աշխատությանը կցված քարտեզում չկան[44]։ Նախ ասենք, որ տեքստում ոչ թե Քաղբերթ է, այլ Դաղվերթ։ Եվ հետո մեզ հայտնի է, որ վանքն ունեցել է նաև Քեղվարդ անունով ագարակ, որը հաղիվ թե վաճառված կամ էլ բռնագրավված լիներ, քանի որ այն «ճշմարիտ շարիաթական

---

38 Նույն տեղում, էջ 407—408։

39 «Ծիլ» վրացերեն նշանակում է բաժանման հետևանքով ստացված մաս։ Տվյալ դեպքում «Ռռնակա ծիլ շինական» նշանակում է, որ Դասպարը և իր որդին Ռռնակ գյուղում ունեցան իրենց կալվածքներից Մխիթարի, Ակոբի և Խեչիկի մասը վաճառում են Սարգիս եպիսկոպոսին։

40 Մատենադարան, ձեռ. № 3031, էջ 413—414։

41 Նույն տեղում, էջ 371։

42 ՄՊԿ, պր. I, էջ 105։

43 «Ջամբռ», էջ 276։

44 Симеон Ереванци, Джамбр, перевод С. Малхасянца, под редакцией П. Арутюняна, М., 1958, с. 398.

վակֆ» էր արված, այսինքն ըստ մահմեդական օրենքի՝ անձեռնմխելի էր։ Կարելի է կարծել, որ Քեղվարդը հենց Գեղարդն է և գործ ունենք սոսկ հնչյունական սխալի հետ։ Այդ դեպքում այն պետք է նշվեր Գեղարդի վանքի մուլքաղարական գյուղերի թվում, սակայն Սիմեոն Երևանցին այնտեղ չի հիշատակում այդ անունը[45]։ Զաքարիա վարդապետի՝ մի քանի գյուղերի ու ագարակների վրա ունեցած սեփականատիրական իրավունքները հաստատող 1489 թ. կալվածագրում հիշատակվում է նաև Ավանիկ գյուղը և նշվում, որ այն գտնվում է Քեղվաբերդ ամրոցի մոտ[46]։ Շատ հավանական է, որ 1526 թ. կալվածագրում հիշատակված Քեղվարդ ագարակն իր անունը ստացել է հենց Քեղվաբերդից, իսկ Սիմեոն Երևանցու մոտ եղած Դաղվերթը մի այլ ագարակ է, որի 3 դանգ մուլքը վանքը կարողացել է ձեռք բերել։

Սյունիքում իր ընդարձակ հողային տարածություններով, մուլքատու գյուղերով, զանազան տիպի կառույցներով ու հարստությամբ առանձնանում էր Տաթևի վանքը։ XIV—XV դդ. Տաթևի վանքի վերաբերյալ մեզ քիչ վկայություններ են հասել։ Սակայն այն հանգամանքը, որ XV դ. հետո վանքը կարողացավ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ձեռք բերել իր երբեմնի տնտեսական հզորությունը, վկայում է, որ մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում էլ այն որոշ չափով պահպանել է իր տնտեսական հզորությունը[47]։ Տաթևի վանքի հողային տարածությունների ընդարձակումն ավելի մեծ թափով շարունակվեց XVI—XVII դդ.։ 1508 թ. գրված մի կալվածագրից տեղեկանում ենք, որ անգեղակոթցի Շմավոն վարդապետը վանքին է նվիրել 15 գյուղ ու մի այգի[48]։ Վանքի իրավունքները ճանաչել ու հաստատել են նաև Սեֆյան շահերը։ Շահ Թահմազ I-ը 1577 թ. հրովարտակով վերահաստատում է վանքի սեփականատիրական իրավունքները՝ Շմավոն վարդապետի կողմից եկեղեցուն նվիրված 15 գյուղերի ու մի այգու վրա[49]։ Վանքի համար լրացուցիչ եկամտի աղբյուր էին նաև նրա վիճակի մեջ մտնող վայրերից ստացվող հասույթները։ Տաթևի վանքի ու գյուղացիների միջև եղած տնտեսական փոխհարաբերությունների մասին է պատմում վանքի եկամտացանկը պատկերող մի ձեռագիր, որի ուսումնասիրումից պարզվում է, որ քննվող ժամանակաշրջանում վանքի վիճակի մեջ են մտել 14 գավառների շուրջ 264 գյուղեր, որոնցից վանքը պարբերաբար պտղահարկ է ստացել[50]։ Աշոտ Հովհաննիսյանի հաշվարկներով «Տաթևու սրբոյ Աթոռոյս թեմի պտուղն», որն այդ ժամանակ դարձել էր դրամական տուրք, կազմել է մոտ 65 թուման[51]։ Եկամտացանկի ուսումնասիրումից նաև պարզվում է, որ գյուղացիները, բացի բնավճար ու դրամական ռենտայից, վանքի համար կատարել են աշխատավճարային ռենտա։ Այսպես, Տաթև գյուղի բնակիչները պարտավոր էին վանքին տալ ոչ միայն 24 բեռ ցորեն ու 4 լիտր մեղր, այլև «գլխովին բոլոր գեղովն մէկ օր վար անեն. Բ օր հունձ անեն. և Ա օր ալ ջառ անեն

45 «Ջամբռ», էջ 272—273։
46 ՄՊԿ, պր. I, էջ 83։
47 ՄՊՀ, պր. I, էջ 44։
48 ՄՊԿ, պր. I, էջ 99—103։
49 ՄՊՀ, պր. I, էջ 60—62։
50 Մատենադարան, ձեռ. № 4228, էջ 214ա—216բ։
51 Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության։ գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 319։

ինչ բան որ լինի. և Ս. օր եղնարածքն վանքիս համար խոտ հարեն»[52]։ Նման պարտավորություններ ունեին նաև Տանձատափ, Շնհեր, Հալիձոր ու այլ գյուղերի բնակիչները[53]։ Վանքն ուներ նաև արտադրական-տնտեսական բնույթի մի շարք կառույցներ, որոնց օգտագործումից հավելյալ մեծ եկամուտ էր ստանում։

Արցախում բազմաթիվ վանքերի ու եկեղեցիների մեջ, իր հողային ընդարձակ կալվածքներով, տասնյակ գյուղերով, արտերով ու այգիներով, զանազան տիպի տնտեսական կառույցներով առանձնանում էր Գանձասարի վանքը։ Վանքի տնտեսական առաջընթացը հիմնականում սկսվեց XIV—XV դդ., երբ Հասան-Ջալալյան ավատատիրական տան ներկայացուցիչները տիրացան Աղվանքի կաթողիկոսական գահին ու Գանձասարը դարձրին իրենց նստավայրը։ Իրենց ձեռքը վերցնելով Աղվանքի հոգևոր առաջնորդության պաշտոնը, Հասան-Ջալալյաններն այս բնագավառում էլ կարողացան պահպանել իրենց իշխանության ժառանգական բնույթը և նրանց իրավունքները ճանաչվում ու հաստատվում էին եկվոր տիրակալների հրովարտակներով[54]։

Գանձասարի վանքի հողային տարածությունները ևս ընդարձակվում էին առաջին հերթին հայ աշխարհիկ ավատատերերի հատկացումների հաշվին։ Վավերագրերից մեկում այդ մասին ասվում է. «Կամաւն Աստծոյ ես Վելիճան և եղբարք իմ որդիք Սայտունին՝ թոռն մեծին Աղբաստու տեառն Խաչենու, տուաք Ալմանայ իւր չորս սահրատովն ի սուրբ ուխտս Գանձասարայ»[55]։ Նման տիպի նվիրատվություն կատարում են նաև Աղաբեկի որդի Սմբատը և ուրիշներ[56]։

Գանձասարում ևս հոգևոր ավատատերերը ձեռք բերելով հողեր, առաջին հերթին դրանք գրանցում էին իրենց անունով և ապա նոր նվիրում վանքին։ Այսպես է վարվում, օրինակ, Առաքել կաթողիկոսը՝ Հասան բեկից գնած Ճալեթ գյուղի հետ[57]։ Սարգիս կաթողիկոսը հայտնում է, որ 1546 թ. իր գնած վայրերի չորս ստակ մուլքը տալիս է Գանձասարին[58]։

Վանքապատկան հողատիրության ընդարձակման միջոցներից մեկն էլ գյուղական համայնքի հաշվին ձեռքբերված հողերն էին։ Վավերագրերից մեկը, օրինակ, հայտնում է, որ 1621 թ. Քարագլուխ գյուղի Կոռալան կոչված հանդամասը անցել էր Գանձասարի վանքի տնօրինությանը[59]։

Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսությունների փոխհարաբերությունները XVII դ. առաջին կեսին բավականին սրվեցին։ Էջմիածնի հայոց հայրապետներն աշխատում էին Արցախը ևս ընդգրկել իրենց թեմակալության մեջ ու Գանձասարի կաթողիկոսությանը զրկել այդ վայրերից հասույթներ ստանալու իրավունքից։ Փորձելով արդարացնել Էջմիածնի ձգտումները, Մակար եպիսկոպոս Բարխուտարյանցը հայտնում է, թե «Խաչենի և Աղուանից ժողովուրդն գանգատեցին շահ Սեֆի Ա-ոյն, թէ մենք ի ընէ վիճակուած ենք լինել

52 Մատենադարան, ձեռ. № 4228, էջ 213բ։
53 Նույն տեղում, էջ 213բ—214ա։
54 Ս. Ջալալյան, նշվ. աշխ., մասն Բ, Տփղիս, 1858, էջ 485—486։
55 Հ. Շահխաթունեանց, էջ 374։
56 Նույն տեղում, էջ 376։
57 Նույն տեղում, էջ 380։
58 «Վիմական տարեգիր», էջ 177։
59 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. № 240, վավ. № 81։

թեմ էջմիածնի, այժմ էլ կամենում ենք լինել թեմ էջմիածնի. մեր վերայ չիշխէ Գանձասարի կաթողիկոսն»[60]։ Հիմք ընդունելով 1650 թ. շահ Աբաս II-ի հրովարտակը[61], Մ. Բարխուտարյանցը միաժամանակ հայտնում է, թե «Շահն հրովարտակ է տալիս Փիլիպոս կաթողիկոսին, որ իրաւունք ունի իւր հովանաւորութեան ներքո ընդունել գանգատաւորները»[62]։ Սակայն պարսից շահերի՝ Գանձասարի կաթողիկոսությանը տրված հրովարտակներից երևում է, որ նրանք ճանաչել ու հաստատել են նաև վերջինիս իրավունքները[63]։ Այսպիսով պարզ է դառնում, որ շահական արքունիքը հայոց կաթողիկոսությունների նկատմամբ գլխավորապես պառակտիչ քաղաքականություն է վարել։ Եվ ինչպես ճիշտ նկատել է Բ. Ուլուբաբյանը, «Այդ նրանք էին, որ հպատակներին անընդհատ հրահրում էին իրար դեմ, խափանում ամեն մի քայլ, որ կարող էր տանել դեպի միասնություն, ազգային, պետական կամ հոգևոր մարմնի ստեղծում»[64]։ Իսկ էջմիածնի ձգտումները՝ ընդգրկելու ողջ Արցախն իր թեմակալության մեջ, բացատրվում է այն հանգամանքով, որ XVII դ. առաջին կեսում էջմիածինը պարտքերի մեջ ընկնելով տնտեսապես թուլացել էր, ուստի և ձեռնտու էր իր թեմակալության մեջ ունենալ նաև Արցախը, որտեղից ստացված եկամուտները կբարելավեին նրա տնտեսական վիճակը։ Հետևապես Մ. Բարխուտարյանցի պնդումը ճիշտ չէ։

Մատենադարանի կաթողիկոսական դիվանի ֆոնդում պահպանվում են տնտեսական բնույթի բազմաթիվ վկայություններ՝ Նախիջևանի խանությունում գտնվող ս. Նախավկայի վանքի մասին[65]։ Այդ վավերագրերի ուսումնասիրումից պարզվում է, որ XVI—XVII դդ. Նախավկայի վանքը գնումների, նվիրատվության ու գյուղական համայնքից հողերի բռնագրավման միջոցներով իր ձեռքում էր կենտրոնացրել մոտ 240 սմար[66] մշակելի հողատարածություն[67]։ Վանքապատկան հողերը ջրարբի դարձնելու նպատակով վանքի հոգևոր առաջնորդները կարողացել են ձեռք բերել առուներ ու ջրանցքներ, որոնց վրա կառուցել են ջրաղացներ, դինգեր ու եկամտաբեր այլ կառույցներ։ Նրա վանահայրերը միաժամանակ ակտիվ աշխատանք են ծավալել ոչ միայն վանքի թեմի մեջ նորանոր բնակավայրեր ընդգրկելու, այլև դուրս եկածներին նորից հետ վերադարձնելու ուղղությամբ։ Աստապատ գյուղաքաղաքի հայ հասարակությանը Նահապետ կաթողիկոսի 1694 թ. ուղղած հրովարտակից երևում է, որ հիշյալ վայրի բնակիչներից ոմանք, «չարաբարոյք» արարքների պատճառով, ժամանակավորապես դուրս էին մնացել վանքի թեմակալությունից, ուստի և կաթողիկոսը Աստապատը վերահաստատում է «զվիճակ սրբոյ աթոռոյս Նախավկային» ու միաժամանակ պարտադրում, որ բնակիչները եկեղեցական բոլոր տուրքերն ու հասույթները կանոնավոր վճարեն[68]։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում կալվածատիրական նույնատիպ

60 Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 65։
61 ՄՊՀ, պր. II, էջ 147—148։
62 Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 65։
63 ՄՊՀ, պր. II, էջ 83—84, 110։
64 Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դդ., Երևան, 1975, էջ 382։
65 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. № 242, վավ. № 91, 96, 99, 100 և այլն։
66 Սմարը կազմել է 0,25 նա։
67 Հ. Թումանյան, Հայաստանի տնտեսական զարգացման պատմություն, Երևան, 1960, էջ 265։
68 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. № 244, վավ. № 252։

տնտեսություն ունեին նաև Նորավանքը, Դարաշամբի, Հաղբատի ու Հաղարծնի վանքերը, Զագավանքը, Խոր Վիրապը, Մուղնիի ս. Գևորգ վանքը և Արևելյան Հայաստանի մի շարք այլ վանքեր։

Այսպիսով, փաստերը հավաստում են, որ ուշ միջնադարում հայ եկեղեցին ընդհանուր առմամբ զգալի տեղաշարժ է ապրել, կայունացնելով իր դիրքերը ավատատիրական սոցիալ-քաղաքական սիստեմում։ Ստեղծված անբարենպաստ քաղաքական պայմաններում հայ եկեղեցին ոչ միայն կարողացավ պահպանել իր գոյությունը, այլև աշխարհիկ ավատատերերի հատկացումների, գնումների ու գյուղական համայնքի հողերի բռնագրավման հաշվին դարձավ խոշոր հողատեր։ Հոգևորականության ազդեցիկ ներկայացուցիչները ձեռք բերելով տնտեսական զգալի ուժ, հաճախակի իրենց ձեռքում էին կենտրոնացնում նույն շրջանի ոչ միայն հոգևոր իշխանությունը, այլև թուլացած կամ էլ ասպարեզից վերացած աշխարհիկ ավատատիրական տների կառավարման ղեկը՝ դրանով իսկ մեծացնելով երկրի քաղաքական կյանքում ունեցած իրենց ազդեցությունը։

ЦЕРКОВНОЕ ЗЕМЛЕВЛАДЕНИЕ И МОНАСТЫРСКОЕ ПОМЕЩИЧЬЕ ХОЗЯЙСТВО В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ (XVI—XVII вв.).

ГАМЛЕТ ТОРОСЯН

Резюме

Одна из основных особенностей феодального общества Восточной Армении состояла в том, что в отличие от феодальных домов, которые постепенно исчезали, церковные имения в какой-то степени оставались невредимыми.

Воспользовавшись относительно лояльным отношением сефевидских шахов, армянское духовенство значительно сохранило свои привилегии, а также экономические позиции. За счет приношений и закупок, а также разорявшихся общин церковь расширяла свои земельные угодья.

В XVI—XVII вв. экономические возможности феодального духовенства заметно расширились, и оно вовлеклось в мирскую жизнь, организуя свои типичные помещичьи хозяйства.